Կարապետ աղայի ականատես և ականջալուր վկայութիւնից, բացայայտ երևում է շամախեցի հայ մարդու խելքն ու հանճարը, և Շամախւոյ քաղաքի և նահանգի անցեալ ու ներկայ դրութիւնը, որը թէեւ երբեմն ներկուած է կանաչ, կարմիր գոյներով։

Ցանկալի էր աւելի ընդարձակ տեսնել և կարդալ Լալայեանց տան պատմութիւնը, բայց այսքանով էր բաւականացել իրաւանց տէրը—Մեծապատիւ Կարապետ աղան։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՇԱՄԱԽԵՑԻ ԼԱԼԱՅԵՍՆԵՑ ԱԶՆԻՒ ՏՈՀՄԻ ՄԱՍԻՆ

Երբ պարսից Ա. Շահաբաս թագաւորը Հայաստանից շատ հայեր գաղթեցրեց Պարսկաստան, և բնակեցրեց Սպահան քաղաքում [1]), նրանց մէջ էր գտնվում աղա Յովհաննէսը, որ՝ ըստ աւանդութեան Լալայեանց հարց և հաւուց՝ մեծ պատիւ ունէր թէ հայերի և թէ պարսից մէջ։ Նա լինելով նշանաւոր և պատուելի անձն՝ պարսից Շահ-Սէֆու մօտ՝ 1629 թ. մեծ հաւատարմութիւն է ունեցել, որին տուել է շահը Լալա պատուանունը. Նա եղել է շահի թիկնապահը։ Յովհաննէս աղայի Լալա տիտղոսը աւանդութեամբ ածանցուել է նորա տոհմի վերայ իբրեւ ազգանուն Լալայեանց կամ Լալայով և պահեւել է ցայսօր, որ է շամախեցի Լալայեանց ազնուական տոհմը։ Յովհաննէս աղան կառավարութեան կողմից եղել է իրաւատէր. ունեցել է Սպահան քա-

---

[1]) Տես Պատ. Զամչեան՝ Գ. 555 և 556։
Առաքել պատմագիր՝ Դ. Ե. Զ. Է. Ը։